

13.723

Ս. ՍՈՒԼԿԵՎԻՉ

ԽՍՀՄ ԲՆԱԿԶՈՒԹՅՈՒՆԸ



ՔԱՂԱՔԱԿԱՆ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
1 9 4 0

312

U-77

312
U-77
uy

Ս. ՍՈՒԿԵՎԻՉ

ԽԱՀՄ
ԲՆԱԿԶՈՒԹՅՈՒՆԸ

312 | 2248-40
 4-77 | Ասպետի
 ՔՆ 2130
 Բնակչության

(2 ասպետ)		
ս. 3 1975	28/10/80	



2248
40

С. СУЛЬКЕВИЧ
 НАСЕЛЕНИЕ СССР

Государственное издательство политической литературы
 ЕРЕВАН ● 1940

ԽՍՀ Միությունը աշխարհի առաջին պրոլետարական պետությունն է, փոքրեկ բնակվում են տասնյակ ժողովուրդներ՝ համախմբված միասնական սիրով դեպի իրենց սոցիալիստական հայրենիքը, կոմունիստական կուսակցությունն ու իրենց առաջնորդ ընկեր Ստալինը:

Իբր տերիտորիայի մեծությամբ, ուղղակի հանածոների և հումքի ռեսուրսների հսկայական պաշարներով, զարգացած արդյունաբերությամբ և խոշոր գյուղատնտեսությամբ, փոքրը հագեցած են ամենաառաջավոր տեխնիկայով, իր ռազմական հզորությամբ, վերջապես, բնակչության քանակով ԽՍՀՄ-բանվորների և գյուղացիների յերկիրը—հզոր պետություն է:

Խորհրդային ժողովուրդը կատարեց ԽՍՀՄ ժողովրդական անտեսության արժատական վերակառուցման խնդիրը, փորն արտահայտվեց մեր յերկրի ինդուստրացումով և գյուղատնտեսության կոլեկտիվացումով: ԽՍՀՄ ազրարային յերկրից զարձավ ինդուստրիալ յերկիր:

Ստալինյան յերկու հնգամյակների կատարումը մեր յերկիրն իր անտեսական և քաղաքական նշանակությամբ առաջ մղեց առաջին տեղերից մեկը աշխարհի մնացած յերկրների մեջ:

Ստալինյան հնգամյակների հաջողությունները մեր յերկիրը զարձրին հաղթանակած սոցիալիզմի անխորտակելի ամրոցը: Կարմիր Բանակը զարձավ ամենահզոր բանակն աշխարհում և պատրաստ է կրկնակի հարվածով պատասխանելու պատերազմի հրձիգների հարվածին: Կարմիր Բանակը—համաշխարհային պրոլետարիատի առաջավոր ջոկատի բանակը—բողշևիկյան կուսակցության և Խորհրդային կառավարության կողով պատվով կատարեց իր ազատագրական դերը Արևմտյան Ուկրաինայի և Արևմտյան Բելոսուսիայի աշխատավորության վերաբերմամբ՝ ազատելով նրանց արանական Լեհաստանի զազանային կեղեքումից:

Չհարձակման և բարեկամության պակտեր կնքելով Գերմանիայի հետ, փոխողնության պակտեր Եստոնիայի, Լատվիայի և Լիտվայի հետ, Վիլնո քաղաքն ու Վիլնյոյի մարզը հանձնելով

Լիտվային—ԽՍՀՄ ամբողջ աշխարհի առաջ ցուցադրեց իր աճած հզորութիւնն ու խաղաղութեան իր հետեւողական քաղաքականութիւնը:

Բանվորները, գյուղացիներն ու խորհրդային ինտելիգենցիան կոմունիստական կուսակցութեան և իրենց մեծ առաջնորդ ընկեր Ստալինի փորձված ղեկավարութեամբ ամբողջ աշխարհի աշխատավորներին ցույց են տալիս հեղափոխական ստեղծարար եներգիայի որինակ կոմունիզմի շինարարութեան մեջ:

ԽՍՀՄ—ազատ աշխատանքի և յերջանիկ կյանքի յերկրի բնակչութիւնը կոմունիստական հասարակութիւնն և կառուցում, փորի վրա յեն ուղղված ամբողջ աշխարհի աշխատավորների հայացքները:

«Վորպես արդյունք ԽՍՀՄ ժողովրդական տնտեսութեան բնագալառում տեղի ունեցած այդ բոլոր փոփոխութիւնները՝ այժմ մենք ունենք նոր, սոցիալիստական եկոնոմիկա, փորը չզիտե ճիւղաճամբեր ու գործազրկութիւն, չզիտե աղքատութիւն ու քայքայում և փորը տալիս է քաղաքացիներին բոլոր հնարավորութիւնները ունենոր ու կուլտուրական կյանքի համար»:

Խորհրդային վիճակագրութեան նշատակն է հաշիւի առնել այս փոփոխութիւններն ու նրանց արդյունքները, փորով հետևել «... փոչ մի շինարարական աշխատանք, փոչ մի պետական աշխատանք, փոչ մի պլանային աշխատանք հնարավոր չէ առանց ճիշտ հաշիւառման: Իսկ հաշիւառումը հնարավոր չէ առանց վիճակագրութեան: Հաշիւառումն առանց վիճակագրութեան փոչ մի քայլ առաջ չի գնա»:


1939 թվի հունվարին կատարված մարդահամարը թվերով արտահայտեց մեր յերկրի մեծութիւնը, սոցիալիստական շինարարութեան հաղթանակների արդյունքներն ստալինյան առաջին և յերկրորդ հնգամյակների ընթացքում և մեր հայրենիքի աշխատավորութեան բարեկեցութեան աճումը:

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1939 թ. հունվարի 17-ի մարդահամարի համաձայն ԽՍՀՄ-ում կա 170.467.186 մարդ: (Արեւմտյան Ուկրաինայի և Արեւմտյան Բելոռուսիայի բնակչութեան հետ միասին՝ 183 միլ. մարդ):

1 Ստալին, Չեկուցում ԽՍՀ Միութեան Սահմանադրութեան նախագծի մասին, ԼՊ 18, 1936 թ.:

2 Ստալին, Չեկուցում ԻԿ(Բ)Կ XIII համագումարում, Սղազբ. հաշիւ, ԼՊ 180:



Բնակչության քանակութեամբ մեր յերկիրն ամենախոշոր յերկրներէց մեկն և աշխարհում:

Խոշորագոյն պետութեանքի բնակչութեանը
(միլիոն մարդ)

Չինաստան	450,0
Հնդկաստան	374,8
ԽՍՀՄ	170,5
ԱՄՆ	130,5
Յապոնիա	72,2
Գերմանիա	68,5
Անգլիա	47,6
Իտալիա	43,4
Ֆրանսիա	42,0

ԽՍՀՄ բնակչութեանը 3/2 անգամ ավելի յե Անգլիայի բնակչութեանից, 2 1/2 անգամ՝ Յապոնիայի բնակչութեանից և 4 անգամ՝ Ֆրանսիայի բնակչութեանից:

Ամբողջ աշխարհում կա մոտավորապես 2110 միլ. մարդ, փոքրից Յեփրոսյալում՝ 534,5 միլ., Ասիայում՝ 146,3 միլ., Աֆրիկայում՝ 151,2 միլ., Ամերիկայում՝ 267,8 միլ., Ավստրալիայում և Ովկիանիայում՝ 10,5 միլ. մարդ:

ԽՍՀ Միութեանը կազմված և 11 միութենական իրավահասարակ հանրապետութեաններէց, փոքրնցից ամենախոշորն և ՌյոսՏՍՀ:

Բնակիչների քիվը միութենական հանրապետութեաններում
(հազար մարդ)

ՌոսՏՍՀ	109.278,6
Ռուսական ԽՍՀ	30.980,2
Քերտուսական ԽՍՀ	5.568,0
Ադրբեջանական ԽՍՀ	3.209,7
Վրացական ԽՍՀ	3.542,3
Հայկական ԽՍՀ	1.281,6
Թուրքմենական ԽՍՀ	1.254,0
Ուզբեկական ԽՍՀ	6.282,5
Տաջիկական ԽՍՀ	1.485,1
Ղազախական ԽՍՀ	6.145,4
Կերգելական ԽՍՀ	1.459,3
ԽՍՀ Միութեան	170.467,2

1 Արևմտյան Ռուսիայի և Արևմտյան Բելոռուսիայի՝ պանական ճրնչումից ազատվելու և Խորհրդային Միութեան կազմի մեջ մտնելու հետևանքով ԽՍՀՄ բնակչութեան ավելացումը մոտավորապես 13 միլիոն մարդով:

Միութենական հանրապետութեաններում կան 22 ավտոնոմ հանրապետութեաններ (Ա.ԽՍՀ), 9 ավտոնոմ մարզ, 6 յերկրամաս և 74 մարզ: Սրանցից ՌոսՏՍՀ-ում կա 17 ավտոնոմ հանրապետութեան, 6 ավտոնոմ մարզ, 6 յերկրամաս, 35 մարզ. ՌոսՏՍՀ-ում՝ 1 ավտոնոմ հանրապետութեան, 15 մարզ. ԲոսՏՀ-ում՝ 5 մարզ. Ադրբեջանական ԽՍՀ-ում՝ 1 ավտոնոմ հանրապետութեան և մեկ ավտոնոմ մարզ. Վրացական ԽՍՀ-ում՝ 2 ավտոնոմ հանրապետութեան և 1 ավտոնոմ մարզ. Ուզբեկական ԽՍՀ-ում՝ 1 ավտոնոմ հանրապետութեան և 5 մարզ. Տաջիկական ԽՍՀ-ում՝ 1 ավտոնոմ մարզ. Ղազախական ԽՍՀ-ում՝ 14 մարզ.

Հանրապետութեանները, յերկրամասերը, մարզերն ու խոշոր քաղաքները բաժանվում են շրջանների ու ռայոնների (ԽՍՀՄ-ում մոտ 4 հազար), իսկ շրջանները՝ գյուղխորհուրդներ (ԽՍՀՄ-ում մոտ 63 հազար):

Ավտոնոմ հանրապետութեաններից բնակչության քանակով ամենախոշորներն են՝ Բաշկիրական Ա.ԽՍՀ՝ 3144,7 հազ. բնակչով, Թաթարական Ա.ԽՍՀ՝ 2919,4 հազ., Ուզմուրտական Ա.ԽՍՀ՝ 1220,0 հազ., Մորդովական Ա.ԽՍՀ՝ 1188,6 հազ., Չուվաշական Ա.ԽՍՀ՝ 1077,6 հազ. բնակչով:

Միջանկ փոքրաքանակ ժողովուրդներ նույնպես միացված են ավտոնոմ հանրապետութեանների մեջ: Սրանցից Կարմիրկական Ա.ԽՍՀ ունի 220,7 հազ. բնակիչ, Կոմիի Ա.ԽՍՀ՝ 319,0 հազ., Հյուսիսային Ռուսիայի Ա.ԽՍՀ՝ 328,9 հազ., Յակուտիայի Ա.ԽՍՀ՝ 400,5 հազ. բնակիչ:

Յերկրամասերի ու մարզերի մեջ բնակչության քանակով ամենախոշորներն են.

Մոսկվայի մարզ (Մոսկվա քաղաքով)	8.918,4 հազ. բնակիչ
Մոսկվայի մարզ (առանց Մոսկվայի)	4.781,4 » »
Լենինգրադի մարզ (Լենինգրադ քաղաքով)	6.435,1 » »
Լենինգրադի մարզ (առանց Լենինգրադի)	3.243,8 » »
Նովոսիբիրսկի մարզ	4.022,7 » »
Գորկու մարզ	3.876,3 » »
Վորոնեժի մարզ	3.551,0 » »
Ուրալի մարզ	3.482,4 » »

Ավտոնոմ մարզերի մեջ ամենախոշորը Խակասական ավտոնոմ մարզն է—270,7 հազ. բնակչութեամբ (մտնում է Կրասնոյարսկի յերկրամասի մեջ):

Ամենափոքր ավտոնոմ մարզերն են՝ Չերքեզական ավտոնոմ

մարզը՝ 92,5 հազ. բնակչությամբ (մտնում է Որջոնիկիձևյի յերկրամասի մեջ), Հրեական ախտոնում մարզը՝ 108,4 հազ. բնակչությամբ (մտնում է Խարարովսկի յերկրամասի մեջ) :

ԽՍՀՄ-ում կա 922 քաղաք և 1448 քաղաքատիպ ավան :

ԽՍՀՄ-ում ընդամենը կա 55·909·908 հոգի քաղաքային բնակչություն, վորը կազմում է Միության ամբողջ բնակչության 32,8%-ը :

Քաղաքային բնակչության տեսակարար կշիռը միութենական առանձին հանրապետություններում

Քաղաքային բնակչության

	տոկոսը
ՌՍՖՍՀ	33,5
Ուկրաինական ԽՍՀ	36,2
Բելոռուսական ԽՍՀ	24,7
Ադրբեջանական ԽՍՀ	36,2
Վրացական ԽՍՀ	30,1
Հայկական ԽՍՀ	28,6
Թուրքմենական ԽՍՀ	33,2
Ուզբեկական ԽՍՀ	23,0
Տաջիկական ԽՍՀ	17,0
Ղաղախական ԽՍՀ	27,8
Կիրգիզական ԽՍՀ	18,5

Միութենական միջանկի Հանրապետությունների (ՌՍՖՍՀ, Ադրբեջանական ԽՍՀ, ՌՍՖՍՀ և ուրիշ.) քաղաքային բնակչության տոկոսը ընդհանուր միութենական միջին տոկոսից (32,8) բարձր է :

Քաղաքային բնակչության նվազագույն տեսակարար կշիռ ունեն Տաջիկական և Կիրգիզական ԽՍՀ-ները :

ՌՍՖՍՀ առանձին ավտոնոմ Հանրապետություններից, յերկրամասերից ու մարզերից քաղաքային բնակչության տեսակարար կազմով առաջին տեղն են բռնում .

Քաղաքային բնակչության

	տոկոսը
Մուրմանսկի մարզ	84,3
Սվերդլովսկի մարզ	60,0
Ղրիմի ԱԽՍՀ	52,0
Հյուս. Ոսեթական ԱԽՍՀ	47,1
Խարարովսկի յերկրամաս	45,3
Մոսկովայի մարզ (առանց Մոսկովայի)	44,5
Իվանովոյի մարզ	44,1

Մյուս կողմից, կան մարզեր, վորտեղ քաղաքային բնակչությունը դեռ շատ քիչ է գյուղականի համեմատությամբ : Այսպես՝ Կուրսկի մարզում քաղաքային բնակչությունն ընդամենը 9% է, իսկ գյուղականը՝ 91%, Ռյազանի մարզում քաղաքային բնակչությունը 9,7% է, Մորդովական ԱԽՍՀ-ում՝ 6,9% :

50 հազարից ավելի բնակչություն ունեցող 174 քաղաքների մեջ 82 քաղաք ունեն 100 հազարից ավելի բնակչություն և 92 քաղաք՝ 50-ից մինչև 100 հազ. բնակչություն :

Ամենախոշոր քաղաքները հետևյալներն են .

Մոսկվա	4·137,0 հազ. բնակչ.
Լենինգրադ	3·191,3 » »
Կիև	846,3 » »
Նարևի	833,4 » »
Բադու	809,3 » »
Գորկի	644,1 » »
Ոդեսսա	604,2 » »
Տաշքենտ	585,0 » »
Թբիլիսի	519,2 » »
Ռոստով-Դոն	510,3 » »
Դնեպրոպետրովսկ	500,7 » »
Ստալինո	462,4 » »
Ստալինգրադ	445,5 » »
Սվերդլովսկ	425,5 » »
Նովոսիբիրսկ	405,6 » »
Կազան	401,7 » »

50 հազարից ավելի բնակչություն ունեցող քաղաքներն ըստ խոշորությունից դասավորվում են այսպես . 3 միլիոնից ավելի բնակչությամբ՝ 2 քաղաք, 750 հազարից մինչև 3 միլ.—3, 500-ից մինչև 750 հազ.—6, 250-ից մինչև 500 հազ.—17, 100-ից մինչև 250 հազ.—54 և 50-ից մինչև 100 հազար բնակչությամբ՝ 92 քաղաք :

2. ԽՍՀՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՃՈՒՄԸ

ԽՍՀՄ բնակչության թիվն աճում է արագ տեմպով : ԽՍՀՄ տերիտորիայի բնակիչների թիվն ըստ կատարված մարդահամարների հետևյալն է .

1897 թ. փետրվարի 9-ին	106,4 միլ. մարդ
1920 թ. ոգոստոսի 20-ին	134,2 » »
1926 թ. դեկտեմբերի 17-ին	147,0 » »
1939 թ. հունվարի 17-ին	170,5 » »

1926 և 1939 թ.թ. մարդահամարների միջև ընկած ժամանակամիջոցում՝ 12 տարվա ընթացքում ԽՍՀՄ բնակչությունն ավելացել է 23,5 միլ. մարդով կամ 15,9 %-ով:

ԽՍՀՄ բնակչության աճման տեմպը յերկու անգամ ավելի է, քան կապիտալիստական Յեվրոպայի բնակչության աճման տեմպը: Այսպես, Յեվրոպայի կապիտալիստական յերկրներում վերջին 12 տարում բնակչությունը 367 միլիոնից հասել է 399 միլ. մարդու, այսինքն ավելացել է 32 միլիոնով, կամ 8,7 %-ով, իսկ ԽՍՀՄ-ում այս ժամանակամիջոցում բնակչությունն ավելացել է 15,9 %-ով: Բնակչությունը ԽՍՀՄ-ում յերկու անգամ ավելի արագ է աճում, քան կապիտալիստական յերկրներում: Բնակչության միջին տարեկան աճը (1926-ից մինչև 1939 թ.թ.) ԽՍՀՄ-ում կազմում է 1,23%, իսկ Ֆրանսիայում՝ 0,08%, Անգլիայում՝ 0,36%, Գերմանիայում՝ 0,62%, ԱՄՆ-ում՝ 0,67%:


Միութենական առանձին հանրապետություններ, առանձնապես անդրկովկասյան և միջին-ասիական հանրապետությունները, անցած 12 տարիների ընթացքում ցույց են տալիս բնակչության աճման շատ ավելի մեծ տոկոս՝ համեմատած համամիութենական աճման հետ:

Այսպես, այն ժամանակ, յերբ ամբողջ ԽՍՀՄ համար բնակչության աճը հավասար է 15,9%-ի, Կիրգիզական ԽՍՀ բնակչությունն աճել է 45,7%-ով, Հայկական ԽՍՀ՝ 45,4, Տաջիկական ԽՍՀ՝ 43,9 Ադրբեջանական ԽՍՀ՝ 38,7, Ուզբեկական ԽՍՀ՝ 37,6, Վրացական ԽՍՀ՝ 32,3, Թուրքմենական ԽՍՀ՝ 25,6 %-ով:

ՌեհմՍՀ ավտոնոմ մարզերի բնակչությունն ավելացել է 58%-ով, իսկ ավտոնոմ հանրապետություններինը՝ 23%-ով:

Ազգային հանրապետությունների ու մարզերի բնակչության այսպիսի ավելացումը վկայում է ԽՍՀՄ ժողովուրդների բարեկեցության աճման, նրանց մեջ արդյունարերական և կուլտուրական շինարարության զարգացման, լեռնյան-ստալինյան ազգային քաղաքականության հաղթանակի մասին:

Աճման համամիութենական տոկոսը բավականաչափ բարձրացնում են նաև ինդուստրիալ և արևելյան յերկրամասերն ու մարզերը: Այսպես՝ ՌեհմՍՀ Ստալինյան մարզի բնակչությունն ավելացել է համարյա յերկու անգամ՝ 91%-ով, Մոսկվայի մարզի բնակչությունը (առանց Մոսկվայի)՝ 73,8 %-ով: Ուրալի, Սիբիրի և Հեռավոր Արևելքի յերկրամասերի ու մարզերի բնակչությունն ավելացել է 6 միլիոն հոգով, կամ 33,0 %-ով: Խա-



բարովսկի յերկրամասի բնակչությունն ավելացել է 136,4 %-ով, Չիտայի մարզինը՝ 73,0, Սվերդլովի մարզինը՝ 53,4 և Նովոսիբիրսկի մարզինը՝ 53,3 %-ով:

Այս հանրապետությունների ու մարզերի, առանձնապես ԽՍՀՄ արևելյան մասի ինդուստրացումը զեպի իրեն է ձգել Ուկրաինայի, Կուբսկի, Ռյազանի մարզերի հողատակավ շրջանների բնակչությունը: Սրանով է բացատրվում վորոշ գերբնակված մարզերի բնակչության նվազումը: Այսպես՝ Կուբսկի մարզում բնակչությունը պակասել է 10,4 %-ով, Ռյազանի մարզում՝ 8,9, Պենզայի մարզում՝ 17,9 %-ով:

Կապիտալիստական յերկրների բնակչության դանդաղ աճման կողքին ԽՍՀՄ բնակչության քանակական հսկայական աճումը հաստատում է զիտական սոցիալիզմի հիմնադիրների այն ցուցումները, վոր կապիտալիստական հասարակարգը խոչընդոտ է հանդիսանում բնակչության աճման համար, իսկ սոցիալիզմը նպաստում է բնակչության աճման:

Վորոշելով բնակչության աճման որենքները, Մարքսը, Ենգելսը և Լենինը հաստատել են, վոր բնակչության աճումը կախված է ժողովրդի բարեկեցությունից, սոցիալական կարգերի բույլթից:

«...Սրտադրության ամեն մի առանձին պատմական յեղանակի իրոք հատուկ են բնակչության իր հատուկ, պատմական նշանակություն ունեցող որենքները»¹:

Լենինն այս որենքն արտահայտել է հետևյալ խոսքերով. «Մարդու բազմացման պայմաններն անմիջականորեն կախում ունեն դանդաղ սոցիալական որգանիղմների կառուցվածքից...»²:

Կապիտալիզմը ծնում է գործադրություն և հարբերական գերբնակչություն, «...կապիտալը շահագործման իր պահանջմունքների համապատասխան կարգավորում է հենց բանվորական ուժի այդ արտադրությունը, մարդկային մասսայի արտադրությունը, վորին նա պետք է շահագործի»³:

Սա հանգում է բնակչության աճման վոչ միայն անընդհատ դանդաղացման, այլև նույնիսկ նրա աճումը դադարեցնելուն:

Մեր յերկրի աշխատավորները գործադրություն և վորևե ուրիշ դրդապատճառ չգիտեն ծնելությունը կրճատելու համար:

¹ Մարքս, Կապիտալ, 4. I, էջ 539, 1936 թ.:

² Լենին, 4. I, էջ 335:

³ «Մարքսի և Ենգելսի արխիվ», 4. II (VII), էջ 169:

Խորհրդային իշխանությունն առավելագույն նպաստավոր պայմաններ է ստեղծում ծնելության աճման համար: Սոցիալիստական պետությունը մեծ հողատարություն է ցուցաբերում մոր և մանկան նկատմամբ, ողնություն ցույց տալով բազմազավակ ընտանիքներին, մեծ միջոցներ հատկացնելով ծննդատների, մսուրների ցանցի զարգացման համար և այլն:

Այսպիսով՝ ԽՍՀՄ բնակչության ավելի ու ավելի արագ աճումը պայմանավորված է խորհրդային ժողովուրդների բարեկեցության աճումով, վորը հետևանք է յերկրում սոցիալիզմի տարած հաղթանակի:

3. ՔԱՂԱՔԱՅԻՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՃՈՒՄԸ

«...Մեր արդյունաբերությունը նախապատերազմյան մակարդակի համեմատությամբ աճել է ավելի, քան ինն անգամ, այնինչ կապիտալիստական գլխավոր յերկրների արդյունաբերությունը շարունակում է դուրիել նախապատերազմյան մակարդակի շուրջը... Արտադրական տեխնիկայի և մեր արդյունաբերության աճման տեմպերով մենք արդեն հասել և անցել ենք կապիտալիստական գլխավոր յերկրներից», —ասաց ընկեր Ստալինը կուսակցության XVIII համագումարում:

1937 թ. արդյունաբերական արտադրանքի 80 %-ից ավելին արտադրել են այն Ֆարրիկաներն ու գործարանները, վորոնք կառուցվել կամ ամբողջովին վերակառուցվել են ստալինյան հրեզամյակների տարիներին:

Ստալինյան առաջին և յերկրորդ հնգամյակների ընթացքում նոր ու վերակառուցված հին արդյունաբերական ձեռնարկությունների բաղայի վրա, հարյուրավոր շինարարական հրապարակների վրա զարգանում է յին հին քաղաքներն ու առաջանում նոր արդյունաբերական կենտրոններ:

Ուժգին տեմպով սկսեց աճել քաղաքային բնակչությունը: Սա կարելի յե տեսնել հետևյալ թվերից:

Նախապատերազմյան տարիներին ցարական Ռուսաստանի քաղաքային բնակչության տարեկան աճը միջին հաշվով կազմում էր 500 հազար մարդ, 1920 և 1923 թվերի միջև՝ միջին հաշվով 700 հազար մարդ, 1923 և 1926 թվերի միջև՝ 1 միլիոն մարդ: Յերկու հնգամյակների տարիներին քաղաքային բնակչության միջին տարեկան աճը կազմում է 2,5 միլ. մարդ:

Վերջին 12 տարում քաղաքային բնակչության թիվն ավելա-

ցել և 2 անդամից ավելի: Աշխարհի վոչ մի յերկրում աճման աջակցի տեմպ չկա:

Իրենց քաղաքային բնակչության կրկնապատկման համար Ամերիկայի Միացյալ Նահանգներին նույնիսկ նրանց եկոնոմիկայի ծաղկման շրջանում հարկավոր յեղավ 30 տարի, Անգլիային՝ 70 տարի:

Քաղաքային բնակչության աճումը ցույց տվող թվերի մեջ, ինչպես նաև սոցիալիստական շինարարության պլանի կատարման ցուցանիշներում յերևում են սոցիալիզմի հաղթանակները մեր յերկրում:

Քաղաքային բնակչության հսկայական ավելացումը պետք է առաջացներ գյուղական բնակչության վորոչ նվազում:

Քաղաքային և գյուղական բնակչության հարաբերակցության փոփոխությունները

Տարիներ	Քաղաքային բնակչության տոկոսը	Գյուղական բնակչության տոկոսը
1897	11,5	88,5
1914	15,0	85,0
1920	15,6	84,4
1923	15,5	84,5
1926	17,9	82,1
1939	32,8	67,2

12 տարում՝ 1926-ից մինչև 1939 թիվը քաղաքային բնակչությունը 26,3 միլիոնից հասել է 55,9 միլ. մարդու, կամ ավելացել է 29,6 միլիոնով, այսինքն՝ ավելի քան յերկու անգամ:

Ըստ քաղաքային բնակչության աճման չափի ու տեմպի աչքի յեն ընկնում հետևյալ միութենական հանրապետությունները-

- Ղազախական ԽՍՀ՝ ավելի քան 3 անգամ (228,7 %)
- Թուրքմենական ԽՍՀ՝ 3 անգամ (204 %)
- Տաջիկական ԽՍՀ՝ ավելի քան 2 անգամ (137,6 %)
- Կիբգիզական ԽՍՀ՝ ավելի քան 2 անգամ (121,2 %)
- Հայկական ԽՍՀ՝ ավելի քան 2 անգամ (119,3 %)

Քաղաքային բնակչության ընդհանուր միութենական աճը հավասար է 112,5 %-ի:

ՌԽՖՍՀ հանրապետությունների, յերկրամասերի ու մարզերի մեջ ըստ քաղաքային բնակչության աճման չափերի առաջին

տեղը զբաղում են՝ Մուրմանսկի մարզը՝ ավելացում 14 անգամ, Նովոսիբիրսկի մարզը՝ 4 անգամ, Խարաբովսկի յերկիրը՝ 4 անգամ: ՌԽՖՍՀ մնացած ինդուստրիալ մարզերում քաղաքային բնակչության աճման տոկոսը նմանապես ավելի բարձր է, քան ընդհանուր միութենական միջին աճումը:

Կապիտալիստական հասարակության մեջ գյուղերից բնակչության հոսումը զեպի քաղաքները հետևանք է այն բանի, վոր հողազրկված ու աղքատացած գյուղացիությունը գյուղերից քըշվում է քաղաքները՝ վորոնելու համար աշխատանք և մի կտոր հաց:

Կապիտալիստական քաղաքները ծառայում են վորպես գաղափարաբան կեղեքման ու շահագործման կենտրոն՝ գյուղերից և ավաններից դաղթող ավելցուկային գյուղական բնակչության համար:

Սոցիալիստական հասարակության մեջ գյուղական բնակչության անցումը քաղաքային բնակչության կատեգորիայի միանգամայն այլ բնույթ ունի և հետևանք է բոլորովին ուրիշ պատճառների: Այս հանգամանքն առավելագույն պարզություն ու վորոշակիություն արտահայտված է ՀամԿ(բ)Կ XVIII համագումարում ընկեր Ստալինի աված զեկուցման հետևյալ խոսքերում-

«Այժմ արդեն խոսքը վերաբերում է վոչ թե գործազուրկներին և գյուղերից կտրված ու սովի ահի տակ ապրող անտուն գյուղացիներին արդյունաբերության մեջ վորեև կերպ տեղավորելուն և վորոքմածությունից աշխատանքի վերցնելուն: Այդպիսի գյուղացիներ վաղուց արդեն չկան մեր յերկրում: Յեվ այդ, իհարկե, լավ է, վորովհետև դա ցույց է տալիս մեր գյուղի ունեորությունը: Այժմ խոսք կարող է լինել միմիայն այն մասին, վորպեսզի կոլտնտեսություններին առաջարկենք հարզել մեր խնդիրը և աճող արդյունաբերության համար ամեն տարի մեզ բաց թողնել թեկուզ և մոտավորապես մեկ և կես միլիոն յերկտասարդ կոլտնտեսականներ: Արդեն ունեոր դարձած կոլտնտեսությունները պետք է նկատի ունենան, վոր առանց նրանց կողմից այդպիսի ողնություն չատ դժվար կլինի ել ավելի ընդլայնել մեր արդյունաբերությունը, իսկ առանց արդյունաբերության ընդլայնման չենք կարողանա բավարարել գյուղացիների աճող պահանջը՝ մասսայական սպառման ապրանքների նկատմամբ: Կոլտնտեսությունները լիակատար հնարավորություն ունեն բավարարելու մեր այս խնդիրը, վորովհետև տեխնիկայի առատու-

թյունը կոլտնտեսություններում՝ ազատում է գյուղի աշխատողներին մի մասին, իսկ այդ աշխատողներն արդյունաբերության մեջ փոխադրվելով, կարող են հսկայական ոգուտ տալ մեր ամբողջ ժողովրդական տնտեսությանը»:

Այսպիսով, մեզանում գյուղական բնակչության քաղաքային փոխարկման պրոցեսը տեղի յե ունենում յերկրի ինդուստրացման և գյուղատնտեսական արտադրության վերակառուցման յաղաթի վրա:

Քաղաքային բնակչության քանակական աճման հսկայական տեմպին նպաստում են մի կողմից նորանոր արդյունաբերական ձեռնարկությունների կառուցումն ու շահառործման հանձնումը, վորոնք պահանջում են միլիոնավոր նոր բանվորներ ու ծառայողներ, և մյուս կողմից՝ աշխատանքի արտադրողականության մեծ աճումը, իրրև հետևանք կոլտնտեսությունների ու խորհրտնտեսությունների գյուղատնտեսական արտադրության մեխանիզացիայի, վորը կադրեր և ազատում արդյունաբերության համար:

Քաղաքային բնակչությունն աճում էր իրրև հետևանք՝

ա) գյուղական վայրերից բանվորների կազմակերպված ներգրավման քաղաքների սոցիալիստական արդյունաբերության մեջ:

բ) նախկին գյուղերի՝ քաղաքների ու բանվորական ավանների վերածվելու, վորոնք դառնում են արդյունաբերական կենտրոններ:

գ) առաջներում անբնակ վայրերում նոր քաղաքների առաջացման՝ նոր հիմնված ձեռնարկություն-նորակառուցյների յաղաթի վրա:

դ) քաղաքների բնակչության բնական աճման (մահացածների թվի նկատմամբ ծնվածների թվի գերազանցման):

Մեջ ենք բերում հաշվեկշռային մի աղյուսակ, վորից յերևում է, թե ինչի հաշիին է տեղի ունեցել քաղաքային բնակչության ավելացումն ու գյուղականի նվազումը 12 տարվա ընթացքում՝ 1926-ից մինչև 1939 թիվը:

	Գյուղական բնակչություն	Քաղաքային բնակչություն	Ընդամենը
	(միլիոն մարդ)		
Բնակչությունն ըստ 1926 թ. մարդահամարի	120,7	26,3	147,0
12 տարվա ընթացքում գյուղից քաղաք են անցել	— 18,5	+18,5	—

Բնական աճ	+ 18,2	+ 5,3	+23,5
Գյուղերը քաղաք դարձած վայրերում	— 5,8	+ 5,8	—
Ըստ 1939 թ. մարդահամարի	114,6	55,9	170,5
<hr/>			
1926 և 1939 թ. թ. տարբերությունը	— 6,1	+29,6	+23,5

12 տարում քաղաքային բնակչությունն ավելացել է 29,6 միլ. մարդով իսկ գյուղական բնակչությունը պակասել է 6,1 միլ. հոգով, չնայած գյուղում բնական աճը 12 տարում կազմել է 18,2 միլ. մարդ: Գյուղերից քաղաք է փոխադրվել 24,3 միլ. մարդ (18,5 միլ. փոխադրվել է քաղաք և 5,8 միլ. այն գյուղական վայրերի բնակչությունը, վորոնք վերածված են քաղաքների): Այսպիսով գյուղական բնակչության նվազումը կազմում է 24,3—18,2=6,1 միլ. մարդ: Իր վողջ բնական աճը և էլի 6,1 միլ. մարդ գյուղը տվել է քաղաքին:

Չնայած գյուղական բնակչության թիվը նվազել է 5,1%-ով, այդ ժամանակամիջոցում գյուղատնտեսության արտադրանքը 14,8 մլրդ: ուրբուց հասել է 18,5 մլրդ: ուրբու, կամ ավելացել 25,0%-ով:

4. ՆՈՐ ՔԱՂԱՔՆԵՐԻ ԹՎԻ ԱՃՈՒՄԸ

Քաղաքային բնակչության աճումը պայմանավորվել է հին քաղաքների աճումով և նոր քաղաքների ու քաղաքատիպ ավանների ստեղծումով:

12 տարվա ընթացքում ավելացել է քաղաքների թիվը:

1926 թ. մարդահամարի ժամանակ կար 709 քաղաք և 125 քաղաքատիպ ավան, իսկ 1939 թ. մարդահամարի ժամանակ՝ 922 քաղաք և 1448 քաղաքատիպ ավան: Այսպիսով, 1926 թից մինչև 1939 թ. քաղաքների թիվն ավելացել է 213-ով, իսկ քաղաքատիպ ավաններինը՝ 1323-ով:

Այս քաղաքներն ու բանվորական ավաններն առաջացել են նախկին գյուղերի տեղում, իսկ նրանցից մի քանիսը՝ միանդամայն անբնակ վայրերում: ՀամԿ(բ)Կ XVII համագումարում ընկեր Ստալինն ասաց. «Համարյա դատարկ տեղում աճել են նոր մեծ քաղաքներ՝ մեծաքանակ բնակչությամբ: Վիթխարի չափերով մեծացել են հին քաղաքներն ու արդյունաբերական կետերը»: Նոր ամենախոշոր քաղաքներն են. Կարազանդան՝ 165,9 հազ.



բնակչությամբ, Մաշնխողորսիը՝ 145,9 հազ., Ստալինոգորսիը՝ 76,2 հազ., Կոմսոմոլսիը—Սմոլբի վրա՝ 70,7 հազ. բնակչությամբ: Դատարի տեղում առաջացան նաև այլևի պակաս խոշոր քաղաքներ՝ Կիրովսիը (նախկին Սիբիրնոգորսի), Մոլոտովսիը, Կրասնոուբայսիը, Կալինինգրադը, Ելեկարուսալը, Բիրոբիջանը, Բալխաշը, Միկոյան—Շահաբը, Չիրչիկը, Մեդնոգորսիը, Մադագանը և տասնյակ ուրիշ քաղաքներ:

ժամանակակից բոլոր բանվորական ավանները մինչև հեղափոխությունը յեղել են մանր գյուղեր կամ առաջացել են անցյալում անբնակ վայրերում:

Արդի 922 քաղաքներից 568-ն են միայն քաղաքներ յեղել մինչև հեղափոխությունը, հետևաբար, Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխության ժամանակից առաջացել է 354 նոր քաղաք:

Մակայն այնպիսի հին քաղաքներ, ինչպես Ստալինսիը, Ստալինոն, Սվերդլովսիը, Չելյարինսիը, Չապրովյեն և տասնյակ ուրիշ քաղաքներ ըստ եյուլյան նոր քաղաքներ կարելի չէ համարել համեմատած այն քաղաքների հետ, վորպիսին նրանք յեղել են մինչև հեղափոխությունը:

Աշխարհի առաջին սոցիալիստական պետության մայրաքաղաք Մոսկվան դարձավ աշխարհի խոշորագույն քաղաքներից մեկը:

Մինչև պատերազմը նա ուներ 1618 հազ. բնակիչ, 1920 թ.—միայն 1028 հազ., 1923 թ.—1543 հազ., 1926 թ.—2029 հազ., 1931 թ.—2781 հազ., 1939 թ.—4137 հազ. բնակիչ:

Աշխարհի խոշորագույն քաղաքների մեջ Մոսկվան գրավում է յերրորդ տեղը:

Խոշորագույն ֆազաիների բնակչությունն առանց արվարձանների (հազար մարդ)

Նյու-Յորք	7-434
Բեռլին	4-299
Մոսկվա	4-137
Լոնդոն	4-095
Չիկագո	3-585
Լենինգրադ	3-191
Ոսակա	2-990
Փարիզ	2-830

Թե ինչպես է անդրադարձել մեր հայրենիքի ինդուստրացումը քաղաքների ու քաղաքային բնակչության վրա, կարելի չէ

ՅԵՐԿՐԱԳՆԴԻ ԽՈՇՈՐԱԳՈՒՅՆ ՔԱՂԱՔՆԵՐԸ
2 ՄԻԻՈՒՑ ԱՎԵԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՄ ԱՌԱՆՑ
ԱՐԿԱՐՁԱՆՆԵՐԻ
ԴԱՁԱՐ ԲՆԱԿԻՉ

7 434	4 299	4 137
ՆՅՈՒՅՈՐԲ	ԲԵՌԼԻՆ	ՄՈՍԿՎԱ
4 095	3 585	3 191
ԼՈՆԴՈՆ	ՉԻԿԱԳՈ	ԼԵՆԻՆԳՐԱԴ
2 990	2 830	2 165
ՈՍԱԿԱ	ՓԱՐԻԶ	ԲՈՒԵՆՈՍ-ԱՅՐՈՍ
2 087	2 071	2 004
ՎԻԵՆՆԱ	ՏՈԿԻՈ	ՖԻԼԱԴԵԼՓԻԱ

առանձնապես ուելլեֆ կերպով տեսնել համեմատելով ներկայիս մեր հիմնական արդյունաբերական շրջաններ Դոնբասը, Ուրալը և Կուզբասը իրենց նախկին վիճակի հետ:

Դոնեցի ավազանի տերիտորիայի վրա, կամ ներկայիս Ստալինյան և Վորոշիլովգրադյան մարզերում մինչև հեղափոխությունը կար միայն 6 քաղաք: Այժմ այս տերիտորիայի վրա կա 52 քաղաք և 144 քաղաքատիպ ավան:

Իրենց մեծությամբ այս քաղաքները բաշխվում են այսպես.

Քաղաքների խմբերը բնակիչներով	Քաղաքների թիվը		
	1914 թ.	1926 թ.	1939 թ.
Մինչև 10 հազ. բնակչութ.	1	—	—
10—50 հազ. բնակչ.	3	4	39
50—100 հազ. բնակչ.	2	3	8
100 հազ. ավելի բնակչ.	—	1	5
Ընդամենը	6	8	52

Մինչև հեղափոխությունը Դոնբասում կար 6 քաղաք, վորից միայն յերկուսն էլին 50 հազարից ավելի բնակչությամբ և չկար վոչ մի քաղաք 100 հազարից ավելի բնակչությամբ:

Ներկայումս Դոնբասում կա 50 հազարից ավելի բնակիչ ունեցող 13 քաղաք, վորից 5—ը 100 հազարից ավելի բնակչությամբ: Մինչև հեղափոխությունը 10—ից մինչև 50 հազար բնակչություն ունեցող 3 քաղաքների փոխարեն Դոնբասն այժմ ունի 39 այդպիսի քաղաք:

Առաջվա հարից ընկած հանքային ավանների փոխարեն իրենց կեդարի և փոշու մեջ խեղդվող արվարձաններով՝ Սարաչենկաներով ու Նախալովկաներով հանդերձ այժմ առաջացել են բարեկարգ ծաղկող քաղաքներ՝ Գորլովկան (108,7 հազ. բնակչությամբ), Ուրշոնիկիձեն (88,2 հազ. բնակչությամբ), Կրամատորսկը (93,4 հազ. բնակչությամբ) և ուրիշները:

Յուզովկա ավանի տեղում աճել է ըստ ելուցյան միանգամայն նոր քաղաք՝ Ստալինոն—462,4 հազարից ավելի բնակչությամբ:

Մինչև հեղափոխությունը Դոնբասի ամենամեծ քաղաք Լուգանսկը, վոր մոտ 60 հազ. բնակիչ ուներ, վերածվեց վարչական և արդյունաբերական խոշոր կենտրոն Վորոշիլովգրադի՝ 213 հազ. բնակչությամբ:

Նախկին Կադեիվկա ավանի տեղում աճեց Սերգո արդյունաբերական խոշոր քաղաքը:

Դոնբասի քաղաքների ու ավանների աշխատավոր բնակչությունը՝ քաղաքային ու ավանային խորհուրդներ կազմակերպելուց հետո կուլտուրական, բարեկեցիկ կյանք և վարում: Խորհրդային պետությունը խոշոր միջոցներ և ներդրել և ներդրում է քաղաքների ու ավանների բարեկարգման և նրանցում կոմունալ ձեռնարկություններ կառուցելու գործի մեջ:

Քաղաքային բնակչության քանակական աճումը վկայում է մեր յերկրի վոչ միայն ինդուստրացման աճման, այլև աշխատավորների կյանքի կուլտուր-կենցաղային պայմանների բարելավման, նրանց աճած պահանջների բավարարման մասին:

Նույնպիսի պատկեր են ցույց տալիս թիվերը Ուրալի և Կուզբասի քաղաքային բնակչության մասին:

Ուրալի կամ ներկայիս Սվերդլովսկի, Չելյաբինսկի և Պերմի մարզերի տերիտորիայում մինչև հեղափոխությունը կար 20 քաղաք և 14 առավել կամ պակաս խոշոր գործարանային ավան: Այժմ այդ մարզերում կա 47 քաղաք և 109 բնավորական ավան:

Ուրալի բնակչության խմբավորումն ըստ բնակչության քանակի

Քաղաքների խմբերը բնակիչներով	Քաղաքների թիվը		
	1914 թ.	1926 թ.	1939 թ.
Մինչև 10 հազ. բնակչութ.	11	8	4
10—ից մինչև 50 հազ. բնակչ.	6	16	32
(+14 գործարանային ավան)			
50—ից մինչև 100 հազ. բնակչ.	3	1	6
100 հազարից ավելի բնակչ.	—	2	5
Ընդամենը	20	27	47
(+14 գործարանային ավան)			

Մինչև հեղափոխությունը Ուրալում 100 հազ. բնակչությամբ քաղաք չկար, իսկ այժմ կա 100 հազարից ավելի բնակչությամբ 5 քաղաք:

Բավականաչափ աճել է քաղաքային բնակչությունը Ուրալում:

Ուրալի—Սվերդլովսկի, Պերմի և Չելյաբինսկի մարզերի քաղաքային
բնակչությանը
(հազար մարդ)

	1914 թ.	Ըստ 1926 թ. մարդահամարի	Ըստ 1939 թ. մարդահամարի
Ընդամենը քաղաքային բնակչությունը	680,9	1.251,0	3.513,2
Սրանցից՝			
50 հազ. ավելի բնակչ. ունեցող քաղաքներում	201,4	358,2	1.642,5
Այս թվում՝			
100 հազ. ավելի բնակչ. ունեցող քաղաքներում	—	260,1	1.258,6

Այնպիսի խոշոր քաղաքներ, ինչպես են Մազնիտոգորսկը, Կրասնոուբրայսկը, Կրասնոկամսկը, սուսալացի են նախկին միանգամայն անբնակ վայրերում:

Հին քաղաքներ՝ Չելյաբինսկը, Պերմը, Յեկատերինբուրգը (ներկայիս Սվերդլովսկ) անճանաչելի յեն դարձել, նրանց բնակչությունը բազմապատկել է, նրանք դարձել են մարդային խոշոր կենտրոններ:

Հին գործարանային ավաններ՝ Լիսվենսկին, Նադեժդինսկին, Նիժնետադլիսկին, Կիշտոմսկին և Բերեզովսկին դարձել են Ուրալի խոշորագույն քաղաքները իրենց արդյունաբերական առաջնակարգ ձեռնարկություններով:

Աճխարդյունաբերության յերկրորդ հզոր կենտրոն Կուզբասի (Նովոսիբիրսկի մարզ) տերիտորիայում մինչև հեղափոխությունը կար 5 քաղաք: Դրանցից էյապես քաղաք կարելի յեր հաշվել միայն համալսարանական քաղաք Տոմսկը և արագորեն աճող Նովոսիբիրսկիսկը: Մնացած քաղաքները չափազանց մանր էյին և անբարեկարգ:

Այժմ Նովոսիբիրսկի մարզում կա 20 քաղաք, վորոնցից 5-ը 100 հազարից ավելի բնակչությամբ:

Նովոսիբիրսկի մարզի քաղաքների յւմբավորումն ըստ բնակչության քանակի

Քաղաքների յամբերը բնակիչներով	Քաղաքների թիվը		
	1914 թ.	1926 թ.	1939 թ.
Մինչև 10 հազ. բնակչությամբ	2	5	—
10-ից մինչև 50 հազ. բնակչ.	1	4	13
50-ից մինչև 100 հազ. բնակչ.	1	1	2
100 հազ. ավելի բնակչ.	1	1	5
Ընդամենը	5	11	20

Մինչև հեղափոխությունը Կուզբասում դարգանում էր մի արդյունաբերական կենտրոն՝ Նովոսիբիրսկիսկը: Մնացած բոլոր ավանները սուզված էյին կեղտի մեջ, ինչպես և Դոնբասի հանքային ավանները: Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո Կուզբասի արդյունաբերական ծաղկման հետևանքով առաջացան այնպիսի հսկայական քաղաքներ, ինչպես են Ստալինսկը, Կեմբուովոն, Պրոկոպյևսկը, Անժերո-Սուջենսկը, Լենինսկ—Կուզնեցկին և այլն այնպիսի հյուսիսում քաղաքիկների տեղում, ինչպես են Կուզնեցկը, Շչեգլովսկը և ուրիշները:

Սուսալներում անբնակ տեղերում կառուցված են Կիսելսկ, Բելովո, Ոսիննիկի քաղաքները և տանյակ բանվորական ավաններ:

Կուզբասի քաղաքային բնակչության քանակական աճման տեմպի մասին վկայում են հետևյալ թվերը:

Նովոսիբիրսկի մարզի քաղաքային բնակչությանը
(հազար մարդ)

	1914 թ.	Ըստ 1926 թ. մարդահամարի	Ըստ 1939 թ. մարդահամարի
Ընդամենը քաղաքային բնակչությունը	189,0	385,6	1.655,4
